

Armenian Apostolic Church of Cleveland

666 Richmond Road Richmond Heights 24, Ohio • EVergreen 1-6590

6 Փետրուար, 1963

Գերաշնորհ  
Տ. Միոն Արք. Մանուկեան, Առաջնորդ  
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Գերաշնորհ Արքազան Հայր,

Անցեալ կիրակի օր, Փետրուար 3, 1963, յետ Ս. Պատարագի եւ  
ճաշկերոյթի մը, ունեցանք երկրորդ նիստը Գլխավէնտի Հայաստանեայց  
Եկեղեցւոյ Ծխական Տարեկան Ժողովին:

Մեծամասնութեան քուէով հետեւեալ չորս Ծխականները վերընտրը  
ուեցան իբրեւ Ծխական Խորհուրդիս անդամներ, երկու տարուան շրջանի  
մը համար.-

- Տքթ. Գեղամ Կէօքճեան
- Պր. Գէորգ Արսլանեան
- Պր. Արմէն Գասապաշեան
- Պր. Նուպար Ապտալեան

Հետեւեալները ընտրուեցան իբրեւ Հաշուեցնիչ Յանձնախումբ.-

- Պր. Ռալֆ Չագըրեան
- Պր. Պօղոս Աբգարեան
- Պր. Օպի Պաղտասարեան

Չայս յայտնելով ձերդ Արքազնութեան առ ի գիտութիւն, կը  
խնդրենք հաստատում 1963 տարեշրջանին համար:

Փետրուարի 24-ին պիտի ունենանք Վարդանանց տօնակատարութիւն  
իսկ կը ծրագրենք պատարագ ունենալ Մարտի 3-ին: Ծխական Խորհուրդս  
կը խնդրէ ձերդ Արքազնութենէն, որ կարգադրութիւն ընէք եկեղեցականի  
մը այցելութեան համար այդ երկու թուականներուն: Կը փափաքինք նշել  
որ կարելի պիտի չըլլայ մեզի պատարագ ունենալ Փետրուարի 24-ին:  
Ուրախ պիտի ըլլանք հիւրասիրելու եկեղեցական մը այդ միեւնոյն շաբ-  
թուան ընթացքին, որպէսզի կարենայ պատարագել Մարտի 3-ին:

Մաղթելով ձեր գործոց յաջողութիւն, մնամ որդիական յարգանօք,

*Մանուկեան*  
*ԱԱ*

*Ներսէս Արք. Ճէպէճեան*  
Ներսէս Արք. Ճէպէճեան  
Նախագահ Ծխ. Խորհուրդի